

Արտատպված է՝ Ի. Ս. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե. , «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ԱՐԵՎԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ճաշից հետո վառ և տաք լուսավորված ճաշասենյակից դուրս եկան տախտակամած և կանգ առան բազրիքի մոտ: Կինը փակեց աչքերը, ձեռնափը դրսի կողմից դրեց այտին, ծիծաղեց պարզ սքանչելի ծիծաղով,— ամեն ինչ էր սքանչելի այդ փոքրիկ կնոջ մեջ,— ու ասաց.

— Կարծես հարբել եմ... Դուք որտեղի՞ց հայտնվեցիք: Երեք ժամ առաջ նույնիսկ գաղափար չունեի ձեր գոյության մասին: Չգիտեմ իսկ, թե որտեղ դուք նստեցիք, Սամարայո՞ւմ: Բայց միևնույն է... Հիմա զլո՞ւխս է պտտվում, թե՝ մենք որևէ կողմ ենք շրջվում:

Առջևում մթություն էր և լույսեր: Մթության միջից երեսիդ էր խփում ուժեղ, փափուկ քամին, իսկ լույսերը սահում էին ինչ-որ տեղ, մի կողմի վրա. շոգենավը վոլգյան կտրիճությամբ կտրուկ լայն շրջան էր կատարում, մոտենալով մի ոչ մեծ նավահանգստի:

Պորուչիկը բռնեց կնոջ ձեռքը, մոտեցրեց շրթունքներին: Զեռքը, փոքր և ուժեղ, արևայրուքի բուրմունք ուներ: Երանությամբ և սարսափով մարեց սիրտն այն մտքից, թե որքան, հավանաբար, ամուր և թխացած է նա ամբողջությամբ այդ թեթև քաթանե զգեստի տակ, ամբողջ մի ամիս հարավի արևին, ծովի տաք ավագին պառկելուց (կինն ասել էր, որ գալիս է Անապայից): Պորուչիկը մոթմոթաց.

— Իջնենք...

— Ո՞ւր, — հարցրեց կինը զարմացած:

— Այս նավահանգստում:

— Ինչո՞ւ:

Նա լրեց: Կինը նորից ձեռնափը դրեց այտին:

— Խելահեղություն է...

— Իջնենք, — կրկնեց նա բութ: — Աղաչում եմ ձեզ...

— Ահ, արեք, ինչպես կուզեք, — ասաց կինը, երեսը շրջելով:

Թափի ընկած շոգենավը փափուկ թխկոցով դիպավ թույլ լուսավորված նավահանգստին, և նրանք քիչ մնաց իրար վրա ընկնեին: Գլխների վրայով անցավ ձոպանի ծայրը, հետո նավը ետ ընկավ, ջուրը աղմուկով թշշաց, կամրջակները դրդացին... Պորուչիկը վագեց իրերը բերելու:

Մի բոպեից նրանք անցան քուն մտած գետանավակայանից, մտան խոր, մինչև անվակունդերը հասնող ավազի մեջ և լուր նստեցին փոշոտ երկտեղանի կառք: Դիք վերելքը դեպի սար՝ նոսր ծուռ լապտերների միջով, փոշուց փափուկ ճանապարհով, նրանց թվաց անսահման: Բայց ահա բարձրացան, զառիվայրից դուրս եկան և դղրդոցվ անցան սալարկով, ահա ինչ-որ հրապարակ է, պաշտոնատներն են, հրդեհադիտանոցը, ամուն գիշերային տաքությունն ու բույրերը գավառական քաղաքի... Կառապանը կանգ առավ լուսավորված մուտքի մոտ, որի բաց դրուերից երևում էր թեք, իին սանդուղքը, վարդագույն շեղօձիք վերնաշապիկով և սերթուկով ծեր, չսափրված սպասավորը դժկամությամբ վերցրեց նրանց իրերը և իր հալից ընկած ոտքերով առաջ անցավ: Մտան մի մեծ, բայց սարսափելի տոթ, օրվա ընթացքում արևից շիկացած համար՝ պատուհանները սպիտակ վարագույրներով ծածկված, հայելու պատվանդանին դրված չվառված մոմեր, և հենց ներս մտան ու սպասավորն իր ետևից փակեց դուռը, պորուչիկն այնպես թափով նետվեց դեպի կինը և երկուսն էլ այնպիսի մոլեգնությամբ շնչառապ եղան համբուրվելով, որ հետո շատ տարիներ հիշում էին այդ պահը. Երբեք նման ոչ մի պահ չունեցավ այլս ողջ կյանքում՝ ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը:

Առավոտյան ժամը տասին, արևաշող, շոգ երջանիկ առավոտյան՝ եկեղեցիների զանգերով, շուկայով՝ հյուրանոցի առջևի հրապարակում, խոտի, ձյուշի հոտերով, ու դարձյալ բարդ ու հոտավետ այն ամեն բույրերով, որ հատուկ է ուստական գավառական քաղաքին, նա, այդ անանուն փոքրիկ կինը, այդպես էլ իր անունը չասելով, կատակով անվանելով իրեն գեղեցիկ անձանոթուիի, մեկնեց: Քնեցին քիչ, բայց առավոտյան, մահճակալի կողքի ծածկույթից դուրս գալով, իինց բոպեում լվացվելով և հազնվելով, նա թարմ էր, ինչպես տասնյոթ տարեկան: Շփոթվա՞ծ էր նա արդյոք: Ոչ, շատ քիչ: Առաջվա նման պահում էր իրեն պարզ, ուրախ և՝ արդեն խոհեմ:

— Ոչ, ոչ, սիրելիս,— ասաց նա ի պատասխան նրա խնդրանքի ճանապարհը միասին շարունակելու, — ոչ, դուք պետք է մնաք մինչև հաջորդ նավի գալը: Եթե միասին գնանք, ամեն ինչ կփշացնենք: Ինձ համար դա շատ տհաճ կլինի: Երդվում եմ ձեզ, որ ես բոլորովին այն չեմ, ինչ դուք կարող եք մտածել իմ մասին: Երբեք, ոչ. նույնիսկ նման մի բան, ինչ կատարվեց, ինձ հետ չի եղել, և չի էլ լինի այլս: Կարծես ուղեղս մթագնած լիներ... Կամ, ավելի ճիշտ, երկուսս էլ ոնց որ արևահարված լինեինք...

Եվ պորուչիկը կարծես հեշտությամբ համաձայնեց նրա հետ: Թեքև և ուրախ տրամադրությամբ հասցրեց նրան մինչև նավահանգիստ, — վարդագույն Սավառնակի հենց շարժվելու պահին, — բոլորի մոտ համբուրեց նրան տախտակամածում և հազիվ հասցրեց թռչել կամրջակին, որ արդեն ետ էին քաշում:

Նույնպես թեքև, անհոգ վերադարձավ նա հյուրանոց: Սակայն ինչ-որ բան արդեն փոխվել էր: Համարը առանց կնոջ թվաց բոլորովին այլ, քան նրա ներկայությամբ: Սենյակը դեռ լցված էր նրանով, բայց և՝ դատարկ էր: Տարօրինակ բան: Դեռ բուրում էր նրա լավ անգլիական օճանելիքը, դեռ դրված էր սկուտեղին նրա կիսատ թեյով գավաթը, իսկ ինքն արդեն չկար... Եվ պորուչիկի սիրտը հանկարծ սեղմվեց այնպիսի քնքշությամբ, որ շտապեց ծխել ու մի քանի անգամ ետ ու առաջ անել սենյակում:

— Տարօրինակ պատմություն էր,— ասաց նա բարձրածայն, ծիծաղելով ու զգալով, որ աչքերն արցունք են լցվում: — «Երդվում եմ ձեզ, որ ես բոլորովին այն չեմ, ինձ դուք կարող եք մտածել...»: Եվ արդեն մեկնեց...

Ծածկույթը ետ էր քաշված, անկողինը դեռ չէր հավաքված: Եվ նա զգաց, որ ուղղակի ուժ չունի այլևս այդ անկողնուն նայելու: Նա այն ծածկեց, պատուհանները փակեց, որ շուկայի աղմուկը և անիվների ճոճոցը չսի, իջեցրեց սպիտակ պղպջակավոր վարագույրը, նստեց բազմոցին... Այո, ահա և վերջացավ այս «Ճամփորդական արկածը»: Մեկնեց, և հիմա արդեն հեռու է, նստել է, հավանաբար, ապակյա սպիտակ սրահում կամ տախտակամածին և նայում է վիթխարի, արևի տակ փայլսող գետին, հանդիպակաց նավակներին, դեղին ծանծաղուտներին, ջրի և երկնքի փայլուն հեռաստանին, ողջ այդ վլոգյան անծայրածիր լայնարձակությանը... Եվ մնաս բարով, և արդեն ընդմիշտ, առհավետ... Որովհետև այլևս որտե՞ղ կարող են նրանք հանդիպել: — «Հո չեմ կարող, — մտածեց նա, — ին ես չեմ կարող հենց այնպես վեր կենալ ու գնալ այն քաղաքը, որտեղ նրա ամուսինն է, երեք տարեկան աղջիկը, ընդհանրապես նրա ընտանիքն ու ողջ նրա կյանքը»: — Ու այդ քաղաքը նրան թվաց առանձնահատուկ, առանձնապես նվիրական, և այն միտքը, որ նա այդպես էլ ապրելու է այդ քաղաքում միայնակ կյանքով, հաճախ, թերևս, հիշելով իրեն, հիշելով իրենց պատահական, այդքան կարճատև հանդիպումը, իսկ ինքը արդեն երբեք չի տեսնի նրան, այդ միտքը զարմացրեց ու ցնցեց հոգին: Ոչ, դա չի կարող պատահել: Դա չափազանց արտառոց, անբնական, անհավանական կլիներ: Եվ այնպիսի ցավ զգաց, այնպիսի անպիտանիություն՝ առանց նրա իր ողջ հետագա կյանքի, որ համակվեց սարսափով, հուսահատությամբ:

«Սա ինչ բան է, — մտածեց տեղից ելնելով ու դարձյալ ետ ու առաջ անելով սենյակում, ջանալով չնայել ծածկույթի ետև՝ անկողնուն: — Սա ի՞նչ է կատարվում ինձ հետ: Եվ ի՞նչ է պատահել վերջապես: Իսկապես էլ կարծես արևահարություն լինի: Բայց, ամենակարևորը, ինչպես պիտի ամբողջ մի օր մնամ այս խուլ վայրում առանց նրա»: Նա դեռ հիշում էր նրան ամբողջությամբ, իր բոլոր ամենափոքրիկ առանձնահատկություններով, հիշում էր նրա արևայրութիւն և քաթանե զգեստի բույրը, նրա պիրկ մարմինը, աշխույժ, պարզ և ուրախ ձայնը... Հենց նոր վայելած կանացի ողջ հմայքը դեռ զարմանալիորեն կենդանի էր նրա մեջ, սակայն գլխավորն, այնուամենայնիվ, այդ մյուս, բոլորովին նոր զգացումն էր, որը բնավ չուներ, երբ միասին էին, որը մտքով իսկ չէր կարող անցնել, թե կունենա, երբ երեկ սկսում էր այդ, իր կարծիքով, սուկ զվարձալի ծանոթությունը, և որն այլևս չէր կարող նրան ասել: — «Կարևորը, — մտածեց նա, — չէ որ այլս երբեք չես էլ կարող ասել: Եվ ի՞նչ անեմ, ինչպես անցկացնեմ այս անվերջանալի օրը այդ հիշողություններով, այդ անդարմանելի տառապանքով այս աստծու կողմից մոռացված փոքրիկ քաղաքում, հենց այն շողշողուն Վոլգայի ափին, որով նրան տարավ վարդագույն շոգենավը»:

Հարկավոր էր փրկվել, մի բանով զբաղեցնել, ցրել իր մտքերը, մի տեղ գնալ: Նա վճռաբար գլխին քաշեց գլխարկը, վերցրեց ձողամտրակը, կոշկախթանները զրնզացնելով արագ անցավ միջանցքով, ցած վազեց թեք սանդուղքով դեպի մուտքի դուռը... Բայց ո՞ւր գնար: Մուտքի մոտ կառք էր կանգնած, ջահել, հարմար վերնազգեստով կառապանը հանգիստ

իր գլխարկն էր քաշում: Պորուչիկը նայեց նրան շփոթված և զարմացած. ինչպես կարելի էր հանգիստ նստել նստիքին, ծխել և, ընդհանրապես, լինել պարզ, անհոգ, անտարբեր:— «Երեխ միայն ես եմ այսպես դժբախտ այս ամբողջ քաղաքում»,— մտածեց, քայլելով դեպի շուկա:

Շուկան արդեն վերջանում էր: Նա զգիտես ինչու քայլեց թարմ գոմաղբի վրայով՝ սայլերի, վարունգով սայլաբեռների, նոր կավե ճաշամանների և պուտուկների միջով, և գետնին նստած կանայք իրար ետևից կանչում էին նրան, պուտուկները ձեռքներն առնում, թիւլթիւկացնում, մատներով մեջը տկտկացնում, ցույց տալով դրանց ամրությունը, զյուղացիք խլացնում էին նրան իրենց բղավոցով. «Ճրես, ամենալավ վարունգը, ձերդ բարեծնադություն»: Այդ ամենն այնքան հիմար բան էր, այնքան անհեթեթ, որ նա փախավ շուկայից: Նա գնաց տաճար, որտեղ երգում էին արդեն բարձր, ուրախ և վստահ, կատարված պարտքի գիտակցությամբ, հետո երկար քայլում էր, պտտվում սարի զառիթափին ընկած փոքրիկ, շոգ ու անխնամ այգում, որ նայում էր գետի անծայրածիր, բաց պողպատագույն լայնությանը... Նրա կիտելի ուսաղիքներն ու կոճակներն այնպես էին տաքացել, որ ձեռք տալ չէր լինում: Գլխարկաբոլորքը ներսից թացացել էր քրտինքից, դեմքը վառվում էր... Հյուրանոց վերադառնալով, նա հաճույքով մտավ ցածի հարկի մեծ և դատարկ, զով ճաշասենյակը, հաճույքով հանեց գլխարկն ու նստեց փոքրիկ սեղանի մոտ, բաց պատուհանի առջև, որտեղից շոգ էր փշում, բայց, այնուամենայնիվ, օդ էր գալիս, պատվիրեց սառույցով բազկապուր... Ամեն ինչ լավ էր, ամեն ինչի մեջ կար անսահման երջանկություն, մեծ ուրախություն, նույնիսկ այս տապի և շուկայի այս բոլոր հոտերի մեջ, այս անծանոթ փոքրիկ քաղաքի և այս հին զավառական հյուրանոցի, ուր եղել է նա, եղել էր այդ ուրախությունը, բայց և միաժամանակ սիրտն ուղղակի կտոր-կտոր էր լինում: Նա մի քանի ըմպանակ օդի խմեց, հետո սամիթով նոր աղը դրած վարունգ ուտելով, և զգալով, որ ինքը առանց մտածելու վաղն իսկ կմեռներ, եթե հնարավոր լիներ մի հրաշքով նրան ետ քերել, նրա հետ անցկացնել ևս մի, այս օրը, այդ օրն անցկացնել միայն նրա համար, որ ասի նրան, որսէ կերպ ապացուցի, համոզի, թէ որքան տառապալից և հրձվագին է ինքը նրան սիրելու... Ինչո՞ւ ապացուցի: Ինչո՞ւ համոզի: Նա զգիտեր, թէ ինչու, բայց դա նրա համար կյանքից ավելի կարևոր էր:

— Նյարդերս բոլորովին քայքայվել են,— ասաց, հինգերորդ ըմպանակ օդին լցնելով:

Մի կողմ հրեց բազկապուրը, սև սուրճ խնդրեց և սկսեց ծխել ու լարված մտածել. հիմա ի՞նչ պիտի անի, ինչպէ՞ս ազատվի այդ հանկարծակի, անսպասելի սիրուց: Բայց ազատվել, նա այդ չափազանց հստակ էր զգում, հնարավոր չէր: Եվ հանկարծ նորից արագ վեր կացավ, վերցրեց գլխարկն ու ձողամտրակը ու հարցնելով փոստի տեղը, շտապ քայլեց դեպի փոստ՝ գլխում արդեն պատրաստի հեռագրի բառերով. «Այսուհետև իմ ողջ կյանքն ընդմիշտ, ցմահ ձերն է, ձեզ է պատկանում»: Սակայն հասնելով հին հաստ պատերով տանը, որտեղ գտնվում էին փոստն ու հեռագրատունը, սարսափով կանգ առավ. նա զիտեր կնոջ ապրած քաղաքը, զիտեր, որ նա ունի ամուսին և երեք տարեկան աղջիկ, սակայն չզիտեր կնոջ ոչ ազգանունը, ոչ էլ անունը: Երեկ երեկոյան ճաշի ժամանակ և հյուրանոցում մի քանի անգամ հարցրել էր նրան, և ամեն անգամ կինը ասել էր ծիծաղելով.

— Իսկ ձեր ինչի՞ն է պետք իմանալ, թե ով եմ ես և անունս ինչ է:

Փողոցի անկյունում, փոստի մոտ լուսանկարչական ցուցափեղկ էր: Նա երկար նայում էր ինչ-որ զինվորականի մեծ լուսանկարին՝ խիտ ծոպերիզավոր ուսադիրներով, դուրս ընկած աշքերով, նեղ ճակատով, զարմանալի փարթամ այտամորուքներով և շատ լայն կրծքով, ամբողջապես շքանշաններով զարդարված... Որքան արտառոց, սարսափելի է սովորական ամեն ինչը, երբ սիրտդ խոցված է, այս, խոցված,— նա հիմա հասկանում էր այդ,— «արևահարությամբ», չափազանց ուժգին սիրով, չափազանց մեծ երջանկությամբ: Նայեց նորապսակների զույգին,— երիտասարդը երկար սերթուկով և սպիտակ փողկապով, մազերը ոզնած խուզված, հասակով մեկ ձգված և թևանցուկ պսակի քողով աղջկա հետ,— հայացքը դարձեց մի սիրունիկ ու չարաձձի տեսքով աղջկա լուսանկարին, թեք դրված ուսանողական զինարկով... Հետո տառապելով տանջալից նախանձից բոլոր այդ իրեն անծանոթ բայց շտառապող մարդկանց հանդեպ, սկսեց լարված նայել փողոցին, ինչքան աշքը կտրում էր:

— Ո՞ւր գնա: Ի՞նչ անի:

Փողոցը բոլորովին ամայի էր: Տները բոլորը միանման էին՝ սպիտակ, երկիհարկանի, վաճառականական, մեծ այգիներով, և, թվում էր, այնտեղ մարդ չկար. սպիտակ թանձր փոշի էր նստած սալահատակին, այդ ամենը կուրացնում էր, ամենը ողողված էր շոգ, կիզիչ և զվարթ, բայց այստեղ կարծես աննպատակ արևով: Հեռվում փողոցը բարձրանում էր, գոգավորվում ու ասես դեմ առնում անամպ, գորշավուն, փայլող երկնակամարին: Դրանում հարավային ինչ-որ բան կար, որ հիշեցնում էր Սևաստոպոլը, Կերչը... Անապան: Դա հատկապես տանջալից էր: Եվ պորուչիկը, զլուխը կախ զցած, աշքերը կկոցելով լրացից, ուշադիր նայելով ոտքերի տակ, օրորվելով, զայթելով, կոշկախթաններն իրար խփելով, ետ գնաց:

Նա վերադարձավ հյուրանոց այնքան հոգնած, ջախչախված, ասես մի մեծ ճամփա էր կտրել թուրքեստանի կամ Սահարայի նման տեղով: Վերջին ուժերը ժողովելով, մտավ իր մեծ ու դատարկ համարը: Համարն արդեն մարրել էին, հավաքել, վերացրել էին կնոջ վերջին հետքերը, միայն նրա մոռացած մի հերակալն էր դեռ զիշերասեղանիկին ընկած: Նա հանեց կիտելը և նայեց իրեն հայելու մեջ: Դեմքը՝ սովորական սպայի դեմք, արևայրութից գորշացած, սպիտակավուն՝ արևից այրված բեղերով և երկնագունա-սպիտակ աշքերով, որ դեմքի թխության պատճառով ավելի սպիտակ էին թվում, նրա դեմքը հիմա բորբոքված, խելազարի արտահայտություն ուներ, իսկ սպիտակ նուրք վերնաշապիկը՝ օւլայած կանգուն օձիքով, մի քիչ պատճառեկան, խորապես դժբախտ տեսք էր տալիս նրան: Նա մեջքի վրա պառկեց մահճակալին, փոշոտ կոշիկները դրեց թիկնակին: Պատուհանները բաց էին, վարագույրներն իջեցված, և թեթև քամին ժամանակ առ ժամանակ ուղցնում էր դրանք, սենյակ լցնում տաքացած թիթեղյա տանիքների և ողջ այդ լուսառատ ու հիմա բոլորովին դատարկված, լուր վոլգյան աշխարհի տապը: Նա պառկել էր ձեռքերը զլիի տակ ծալած և ուշադիր նայում էր իր առջև: Հետո ատամները սեղմեց, աշքերը փակեց, զգալով, ինչպես կոպերի տակից արցունք է հոսում այտերով, և վերջապես քնեց, իսկ երբ նորից բացեց աշքերը, վարագույրների ետևում արդեն կարմրա-

դեղնին էր տալիս իրիկնային արևը: Քամին հանդարտվել էր, համարում շոգ և չոր էր օդը, ինչպես վառարանի ջեռոցում... Եվ երեկվա օրը և այսօրվա առավոտը հիշում էր նա այնպես, ասես տասը տարի առաջ էին եղել:

Նա անշտապ վեր կացավ, անշտապ հազնվեց, բացեց վարագույրները, զանգը տվեց և պահանջեց ինքնաեռ ու հաշիվը, երկար խմում էր թերը լիմոնով: Հետո հրամայեց կառք կանչել, տանել իրերը և, նստելով երկտեղանի թերն կառքի արևից գույնը զցած նստիքին, սպասավորին տվեց հինգ ռուբլի:

— Երևում է, ձերդ բարեծննդություն, երեկ հենց ես եմ ձեզ զիշերով այստեղ բերել,— ուրախ ասաց կառապանը, սանձերը ձեռքն առնելով:

Երբ իջան նավահանգիստ, Վոլգայի գլխին արդեն կապտին էր տալիս ամառային կապույտ զիշերը, և արդեն շատ գույնզգույն լուսեր էին ցրված գետով մեկ, լուսեր էին կախված մոտեցող շոգենավի կայմերին:

— Տեղը-տեղին հասցրի,— ասաց կառապանը հաճկատարությամբ:

Պորուչիկը նրան էլ հինգ ռուբլի տվեց, տոմս առավ, գնաց նավահանգիստ... Ճիշտ այնպես, ինչպես երեկ՝ թերն բախց նավամատույցին և թերն զիսապտույտ ուտքերի տակ ճոճվելուց, հետո պոկվող ծայրը, փրփրացող ու առաջ շարժվող ջրի աղմուկը մի քիչ ետ քաշված շոգենավի անիվների տակ... Եվ անասելի սիրալիր, հաճելի թվաց այդ շոգենավի մարդաշտությունը, ամբողջովին լուսավորված, լցված խոհանոցաբույրերով:

Մի բոպեից արդեն առաջ շարժվեցին դեպի վեր, նոյն ուղղությամբ, ուր շոգենավը տարավ նրան առավոտյան:

Ամառային մութ մայրամուտը մարեց հեռու առջևում, թույլ, ալարկոտ և բազմագույն արտացոլվելով գետի մեջ, որ հեռվում դեռ տեղ-տեղ լուսավորվում էր թրթռացող այսակներով նրա տակ, այդ մայրամուտի տակ, ու լողում, ետ էին լողում մթության մեջ շուրջը տարածված լուսերը:

Պորուչիկը նստել էր տախտակամածի ծածկի տակ, զգալով իրեն ծերացած մի տասը տարով:

Ծովասերձ Ալպեր, 1925